ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. (Angleterre)

Ամեն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով եւ ժողովրդի համար:

Իւրաքանչիւրի եւ ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա՛ է ճշմարիտ ազատութիւն:



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ
ՏԱՐԵԿԱՆ . . . . . 5 Ֆր.
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ . . . 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ . . . ½ „

Ժողովո՛ւրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը:

Արեան ճահիճները — ահա՛ ազատութեան ճանապարհը:

Ժողովո՛ւրդ, մի՛ աղերսիր, այլ պահանջի՛ր եւ ձեռք բեր:

ԵՐԳԻԾԱՒՈՐԱԿԱՆ—ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ | ԼՕՆԴՕՆ | Nr 12. ԱՊՐԻԼ. Nr 12. | 1896 | ՄԻԱՄՍԵԱՅ

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱՓՐԻԿԷ. — Ա՜Հ, ա՜հ, ա՜հ. Պրն. Լի-Հունկ-չաօ, խնդրեմ Նայիր... Նայիր, հիմա խնդալէս պիտի ճաթիմ. այս ինչ սիրուն տեսարան է. սա Անգլիացին ճիշդ առջեւս կինայ կոր. օ՜հ, ինչ ալ ճերմակ կակուղ մսեր պէտք է ունենայ... սրունքներէն պատուական ապուխտ կը շինուի... մեղք որ գանկը պիտի պայթի կըրկէսի աւազուտին վրայ. ուղեղն պէս համով բան չիկայ աշխարհիս վրայ...

ԱՍԻԱ.—Տօ՛. էն ո՞վ է. սա փոքրիկ չարաճճին տես. այս աճպարարական անանման խաղերը տակն ու վրայ ըրաւ. առիւծի ու ճանճի կռիւն է այս...: Բայց վերջապէս, Տիկին Նուբի-Նկամի, ուրիշ կերպ կարելի չէր, անշուշտ այս այսպէս պիտի վերջանար:

Այս Պրն Պրն. Եւրոպացիները, գիտնալով Թուրքի անբուժելի հիւանդութիւնը, տգիտութեան, ֆանատիկոսութեան և մարդախօշոշ վայրագութեան քաղցկեղը, որը կրծոտել փճացրել է նրա ամբողջ կազմածը, օր աւուր նրա սատկմանը սպասում էին՝ հանգիստ կերպով վայելելու համար նրա գեղեցկուհիների հարեմական հաւաքածոն. բայց ինչ ասել կուզի, որ նախանձը խանձոտում էր նրանց կուրծքը, գալարում էր աղիքները և իւրաքանչիւրը կուզենար ինքը միայն վայելել այդ մուհամմէտական հուրիներին: Ուստի ելան խմբերի բաժանուեցին, իբր թէ երևելի յատակագծեր սարքեցին, գաղտնի դաշինքներ կռեցին միմեանց հետ և միմեանց դէմ. պոռացին, կանչեցին, ճառեր խօսեցին, գիշակերի ատամներ ցոյց տուին միմեանց. ստեցին, խարդախեցին իրենց քրիստոնէական, քաղաքակրթական, մարդասիրական և արդարասիրական բոլոր սկզբունքները և խաղալիք դարձան այդպիսով սա փտած, ոչնչացած կմախքին:

ԱՓՐԻԿԷ. — Բա՜, տես, չէի նկատած. այդ սրունքի ոսկրներէն լաւ դանակի կոթ կը շինուի...: Չե՞ս ըսեր, Պրն. Լի-Հունկ-չաօ, հապա այդ Պրն. Պրն. Եւրոպացիները, որ մինչև իմ կողմերը մարդիկ ուղարկած էին, և այդ գեղեցիկ ստախօսութիւններով մեզ ալ խաբել կուզէին — իբր թէ մարդակերութիւնը գէշ բան է եղեր, քրիստոնէութեան հակառակ է եղեր. այս տեսակ գեռ հազար ու մէկ քարոզներ ալ... — չըսե՞ս, այդ ամենը գայլի աւետարան են եղեր. մեզի պահք պահել տալ և կեանքը իրենք վայելել՛.՛.՛: Փո՜ւհ. ապականութիւն. մեր երկրի Զուլուները և Մակօլօները աւելի քաղաքակիրթ են ասոնց բաղդատմամբ:

ԱՍԻԱ. — Օ՜, այդպիսի քարոզներ մենք ալ շատ լսեցինք. սա վերևի կինն էր մեզ այդ լեզուէն խօսողը, և որչափ լսեր ենք, ժամանակին իսկապէս համապատասխան են եղած իր բարքն ու խօսքերը: Ազատութիւն, հաւասարութիւն և եղբայրութիւն նշանաբանի հեղինակուհին ինքն է եղած առաջինն. իսկ այսօր ամեն բան մոռցած, պոռնիկի շորեր է վերցրել, և ո՞վ ըլլայ որ հաւնիս իր ընտրած սիրահարը. ահա սա հիւսիսային ճերմակ արջն է: Հիմա որ վտանգը տեսան, սիրահար և սիրուհի կաշխատին հաւասարակշռութիւնին պահել. բայց անշուշտ անոնք ալ վար պիտի գլորին, թէկուզ իրար խեղդելով: Մեր երկրի շատ մը ժողովուրդներու պարզամիտ դասակարգը հրապուրուած էր այս անմիտների արտաքին փայլէն և ճարտար շաղակրատութենէն. բայց, փառք Պրահմայի, Վիշնուի և Սիվայի, այսօր ամենքի աչքը բացուած է և գիտենք թէ ինչ է այդ Եւրոպացիների արժէքը:

ԱՄԵՐԻԿԱ. — Տիկին Թոմահաւք, Աւստրալիոյ մէջ այսպիսի զարմանազան տեսարաններ տեսած էիր. արդարև, քեզի ինկած պատառը նախանձելի է. ամբարտաւանութեամբ ուռած և իր զէնքի զօրութեան վրայ յենած սա գարշելի արարածը վերջապէս գլորեցաւ իր երկու արբանեակներով: Եթէ սա փոքրիկ բժժաւոր մանուկը գարեջրով մնած մարդու մսի համը գիտնար, ամենայն սիրով իրեն կը նուիրէի սա Աւստրիացիին մէկ թևը. վանդի վերջապէս այս անսպասելի հացկերոյթին հընչակը նա զարկեց:

ԱՒՍՏՐԱԼԻԱ. — Այո՛, այո՛, պրն. Գոմէշլոտը, անուրանալի է այդ փոքրիկի ճարպիկութիւնը. ես կառաջարկեմ Թուրքին անփուտ մնացած մասը ամբողջովին իրեն թողուլ:

ԹՈՒՐՔ. — Ա՜Հ, սոսկալի վիճակ. վերջապէս այս լակոտը զիս պիտի խեղդէ, ճար չիկայ. բոլոր հաշիւներս խանգարեց այս սատանի բղէզը: Եւ ըսել թէ բոլոր Եւրոպան քթիս վրայ խաղացնում էի... Ա՜Հ, խեղդուեցայ, խեղդուեցայ, օգնութիւն, օգնութիւն, եա՜ Մուհամմէտ:

ՀՆԶԱԿ. — Վերջնական յաղթանակը միշտ ճշմարտութեանն է. ես իմ չուանը կը քաշեմ, վա՛յ ճամպաղութիւն անողներին:

ՁԿՆԵՐՈՒ ՓՈՂՈՎԸ
ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ՈՍԿԵՂՋԻՐԻ ՅԱՏԱԿԷՆ.

Երէկ ձկները ընդհանուր ժողով գումարած էին: Ահագին բազմութիւն մը կը վխտար Վոսփորէն մինչև Ոսկեղջիւր: Ներկայ էին դելփին, թրաձուկ, օձաձուկ, շնաձուկ, վահանաձուկ, անձրուկ, կարմրախայտ, գեղարքուն, տառեխ և ուրիշ ամէն տեսակ ծովի ու գետի մեծ և փոքր ձկներ: Ասոնք կը ներկայացնէին Տրապիզոնի, Սամսոնի, Սև ծովի ուրիշ կողմերու ձկնային ակումբները և զանազան օթեակները. անուշ ջուրի երեսփոխաններն ալ եկած էին Ալիսէն, Ճորոխէն, Սիհոնէն, Ճիհանէն և Եփրատէն (այս վերջինները երկայն ճամբորդութիւն մը ըրած էին՝ Պարսից ծոցէն, Հնդկաց ովկիանոսէն, Պապ-էլ-Մանտէպէն, կարմիր ծովէն, Միջերկրականէն, Տարտանելէն ու Մարմարայէն անցնելով):

Օրուան խնդիրն էր երախտագիտական ուղերձ մը պատրաստել և մատուցանել սուլթան Համիտին, որուն շնորհիւ վերջին ժամանակներս իրենց առատ կեր եկած էր Հայոց դիակներէն:

Երեսփոխանները երկար ճառեր արտասանեցին. ամէնքը ըսին թէ ծովու և գետի բոլոր ձկները աղօթող են սուլթանին արևշատութեան համար. ամէնքը կը վկայէին թէ, այս տարուանին պէս լիութիւն ու ճոխութիւն բնաւ յիշուած չէ իրենց նախնեաց տարեգրութիւններուն մէջ՝ Լենկթիմուրի և Ճինկիզ-խանի օրերէն ի վեր: Վոսփորի ձկներն ալ, իրենց կարգին, երախտագիտութեամբ յիշեցին վեց ամսէ ի վեր սուլթանին իրենց ցոյց տուած առատաձեռնութիւնը. „Շնորհիւ վեհ. սուլթանին, ըսին, մենք թուրքի մսի համն ալ կառնենք, բայց Հայու միսն աւելի համեղ է“:

Վերջապէս որոշուեցաւ ուղերձը խմբագրել Երեսփոխաններն իրենք գրագէտ չըլլալով պատգամաւոր ղրկեցին Անգլիոյ դեսպանին, որ ուղերձին բանաձևը շինէ: Նա պատասխանեց թէ՝ յօժարութեամբ պիտի ընէր, բայց կակնածի իր ժողովրդէն. ուստի իր այցաքարտը տալով՝ ղրկեց զանոնք Ռուսիոյ դեսպանին: Նելիտով և Մաքսիմով սիրով հիւրընկալեցին զիրենք և անմիջապէս պատրաստեցին ուղերձը, որ ձկներու երեսփոխանական ժողովին կողմէ վաւերացուեցաւ և ընտրեալ պատգամաւորութիւն մը տարաւ զայն ներկայացուց սուլթանին:

Սուլթանը շատ գոհ եղեր և զգածուեր է. պատասխանելով ուղերձին, ըսեր է, ի մէջ այլոց. „Նախ աղօթեցէք Զարին կենացը, ապա իմ կենաց. անոր շնորհիւ կը խոստանամ ձեզի ապագային ալ աւելի առատ կեր ղրկել„: Նաև պատուիրեր է որ հաւատարիմ մնան և զգուշանան հայ ձկնորսներու ուռկաններուն մէջ իյնալէ:

Սուլթանն իմանալով որ այդ ուղերձին բանաձևը պատրաստած են Նելիտով և Մաքսիմով, առաջինին ականջակուռ Մէճիտիէ, երկրորդին ալ ա. կարգի Օսմանիէ պատուանշան տուած է, պատգամաւոր ձկներուն ալ մէկ մէկ շքանշան:

Ժողովը վերջացած ըլլալով, այսօր ձկները կը վերադառնան իրենց տեղերը:

ԿԱՐԻՃ.

ՍՈՒԼԹԱՆԻ ԿԱՐԺԱՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Տաճիկ բռնակալը իր կատաղութենէն փրփը-

Ասիա
Ամերիկա
Եվրոպա

րած, ուզեց դրժել այն խոստումները զոր դեռ երէկ էր տուած խոստովանելով իր ամօթալի պարտութիւնը. — ուզեց Զէյթունին տաճիկ կառավարիչ նշանակել:

Բայց եւրոպական պետութիւններու վեց դեսպանները՝ իրենց հետ առնելով մէկ մէկ զոյգ խոշորացոյց ակնոց, ներկայացան Ն. վեհափառութեան և իրեն ժամանիչ ըրին իր այդ խոստմնազանցութենէն ծագելիք անմիջական վտանգը:

Սուլթանը այդ վեց զոյգ ակնոցները իր վիթխարի քիթը անցուց և աչքերը խոշոր խոշոր բացած՝ սկսաւ դիտել վտանգը. այս վերջինը թէև իր քթին տակն էր՝ բայց նա դարձեալ չտեսաւ:

Ասոր վրայ դեսպանները որոշեր են մէկ մէկ զոյգ ակնոց ալ նուիրել Ն. Վ.-եան: Ցուսալի է որ գէթ այս անգամ վտանգը կը նշմարէ և տեղի կուտայ անոր առջև:

Ու Զէյթունը կունենայ իր վաստկած առանձնաշնորհումները:

ԽԱՅԹՈՑ



ՆՈՐ ԱՇԽԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ
ՍՐԲԱԳՐԵԱԼ ԵՒ ԲԱՐԵՓՈԽԵԱԼ.

Ականջը խօսի Հ. Ալիշանին.

„Յեղափոխական“ [1]) մարմնի մը ի լոյս ընծայած Աշխարհագրութեան դասագրքին վերջին տպագրութենէն կարտագրենք հետևեալ շահեկան էջը, որ մեծ լոյս կը սփռէ Հայոց հայրենագիտութեան վրայ.

„Հայ երկրախոյզներու խումբ մը, որ կը բաղկանայ ճարտար նաւորդներէ և լուղորդներէ որոնք կը ճամբորդեն առանց կողմնացոյցի, վերջերս՝ նանսէնի հիւսիսային բևեռի կողմը ըրած յաջող հետազօտութիւններէն քաջալերուելով, իրենք ալ կը փորձեն և կը յաջողին նոր գիւտ մ'ընել.—Իտալիոյ և Հապէշիստանի միջև կը գտնեն հայկական երկիր մը որ մինչև ցարդ մութ և գրեթէ անծանօթ մնացած էր:

Այդ երկրին անունն է Կիլիկիա կամ Սիկիլիա. կը գտնուի Իտալիոյ հարաւային ծայրը, Միջերկրական ծովու արևելեան եզերքը հոն ալ կը բնակին եղեր Հայեր: Հայ երկրախոյզները ծովու վրայ երկար ատեն թափառելէ վերջ՝ յաջողած են ելնել մի անծանօթ կղզի՝ Կիպրիանոս կամ Կիպրոս անունով և որմէ կը տեսնուին եղեր Կիլիկիոյ լեռները. այդ կղզիէն հեռադիտակով կարևոր հետազօտութիւններ են կատարեր և համոզուեր են թէ Սիկիլիա կամ Կիլիկիա Ասիոյ կամ Ափրիկէի ցամաքին մի մասն է, և ո՛չ թէ կղզի, ինչպէս կը գրեն սխալմամբ հին աշխարհագիրները. նաև կը հաւաստեն թէ երկրաբանական մի անիմանալի երևութով այդ երկրէն աներևութացեր է Եւտնա հրաբուխը: Նաև յիշեալ Կիպրիանոս կղզիի բնակիչներէն քաղած են հետևեալ աշխարհագրական տեղեկութիւնները այդ անծանօթ երկրի վրայ.

Կիլիկիոյ մայրաքաղաքն է „Գաղտնի Քաղաք“ ուր, կաւանդուի թէ գոյութիւն ունեցեր է մէկ ինչ որ կոմուն տիստականական կենտրօնական կօմիտէ՝ ջրհեղեղէն առաջ կազմուած. բայց ջրհեղեղի և աշտարակաշինութեան ու լեզուներու խառնակութեան ժամանակ՝ այդ կօմիտէի անդամները կորսուեր ու ցրուեր են:

Գլխաւոր քաղաքներն են. Բերիա, Հալէպ, Գերմանիկ, Մարաշ, Սիս կամ Մեսիս, Միսիսիփի, Այաս կամ Փայաս, Տարսոն, Տէրսիմ, Տարոն, Թարսուս, Թարշիշ, Հաճին, Հարգան, Զէյթուն և Ուլնիա:

Գլխաւոր լեռներն են. Տաւրոս, Անտեան, Ալպեան, Անթիլեան, Անտիտաւրոս, Ամանոս, Հայլեռ, Սեւ լեռ և Կեավուր տաղի լեռնաշղթան:

Այս լեռներու (բնակչա՞ց) գօտիները խիստ երկայն են:

Գլխաւոր գետերն են. Ճիհան, Պիւռամոս, Սէյհան, Գեհոն, Փիսոն, Սարոս, Կիւդնոս, Որոնդէս և Յսի:

Նովեզերեայ գաւառներու մէջ նշանաւոր է Սուէյտիա, որոյ գլխաւոր քաղաքն է Սթոքհոլմ:

Այս երկրի թագաւորները Մէլիք կամ Մենելիք կը կոչուին:

Մեր քաջ և համակրելի երկրախոյզները ամէն վտանգ աչք առնելով՝ ճամբորդեր են նաև մինչև Կիլիկիոյ ծովեզերքը, ուր հիւսիսային լայնութեան և արևելեան երկայնութեան ոռոչ աստիճաններուն վրայ՝ գտած են Հայոց ծոցը, որ մինչև հիմա կորսուած էր. նշանաւոր հետազօտիչները ուզեր են այդ հրապուրիչ ծոցին մէջ մտնել, բայց տեղւոյն բնիկները, նորահաստատ օրէնքի մը համաձայն, չեն ընդուներ զիրենք՝ „Հնչակեան„ անցագիր չունենալնուն պատճառաւ:„

Այս նշանաւոր երկրախոյզներուն, որոնք հիմա Հապէշիստանի կողմերը կը հետազօտեն, կենդանագիրները իրենց անուններով լոյս պիտի տեսնեն „Ապտակ“ի յաջորդ համարներէն միոյն մէջ (եթէ արեգակը չխաւարի):

ԽԱՅԹՈՑ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՀԱՃՈՅԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ.

Ֆրանսական կառավարութիւնը վերջերս սուլթանին սնամէջ հաճոյակատարութիւն մ'ըրաւ որոյ մասին շատ խօսուեցաւ ֆրանսական մամուլին մէջ, և մենք ալ շատ... խնդացինք:

Երիտասարդ Թուրքերու կուսակցութեան ազատախօս բերան «Մէշվէրէթ» լրագրին, որ Բարիզ կը հրատարակուի երկու լեզուով, թուրքերէն մասին շրջաբերութիւնն արգիլուեցաւ Ֆրանսայի մէջ — ուր արդէն զայն ոչ ոք կրնար կարդալ և հասկնալ. իսկ ֆրանսերէն մասին համար որ և էարգելք չի դրուեցաւ...

Սուլթանը նոյնքան խելացի գործ մ'ըրած կըլլար, իթէ ինքն ալ, հետևելով Ֆրանսայի օրինակին, նոյն լրագրի միայն ֆրանսերէն մասին Թուրքիա մուտքն արգիլէր, իսկ թուրքերէն մասին շրջաբերութիւնը ազատ թողուր:

„ԱՊՏԱԿ“Ի ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ.

Լուծել հետեւեալ ռեպուսը (rébus):



Պրն. գրաշարէն՝ կը խնդրեմ զանց չընել չակերտները:

ԱՐԵՒԱԾԱԳԻՆ
ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ
ՆՈՒԻՐ ՏԻԿԻՆ Մ. Ն...ԻՆ.

(Շարունակութիւն) [1])

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

XII.

Այն պաշտօնական մարմինը, որը իբր կանչված էր պաշտպանելու պահպանելու հրպատակներին, օր-ցերեկով կողոպտում էր նրան, թալանի էր տալիս ամէն ինչ, աւերում, քանդում, փճացնում էր... Ընտանեկան յարկի ուրիշ սենեակներից լսվում էին աղեկտուր հառաչանքներ, օգնութիւն, լաց կոծ... Նրա աչքերը կտրատվում էին, նա ուզում էր միաժամանակ ամէն տեղ վազել, ամէնքին հասնել, բայց նրան արգելում էին. բռնութիւնը կաշկանդել էր նրան...

Մի խոր սենեակի մութ անկիւնում, ուր արշալոյսը հազիւ կարողացել էր թափանցել իր աղօտ լոյսը, մէկ ասիական կակուղ անկողնում կէս մէջքից բաց պառկել էր մի կոյս աղջիկ: Նրա ցրիւ եկած երկար մազերը սևմբիլի բարակ ու փայլուն թելերի նման անկանոն կերպով փռվել էին իր կուրծքի և ուսերի վրայ. գանգուրները քամիից ծփացող ալիքաւոր հասուն, ոսկեգոյն հասկերի պէս կիսով չափ ծածկել էին նրա կամարաձև յօնքերը և դէմքը. նրանք կարծես յօրինում էին մի շատ նուրբ ու թափանցիկ շղարշեայ քօղ, որի միջից նշմարվում էր մէկ երևակայական յաւերժահարսի հրապուրող դէմքն իր նուրբ դիմագծով: Խաղաղ քունը նրա երկու թշերի վրայ սփռել էր բազմաթերթեան կարմիր վարդի աքանչելի գոյն, որը կենտրօնից սկսած լոյսի ճաճանչների նման երթալով կամաց-կամաց ցրվում էր և աննկատելի կերպով անհետանում. նա կազմում էր մի հրաշալի ծիրանեգոյն ալք, իր շրջանակում կրելով մի կուսական չքնաղ պատկեր: Կանացի շնչառութիւնը մերթ բարձրացնում էր նրա կուրծքը և մերթ ցածրացնում, որի վրայ հազիւ նըշմարվում էին հասունացած աղջկայ առաջին նշանները. նրբակազմ և բաց-կարմիր շրթունքներն անզգալի կերպով շնչում էին և մեղմօրէն շարժում մազի մետաքսանման թելերը. նրանք յիշեցնում էին նորեկ գարնան քաղցրաշունչ զեփիւռի հանդարտ սօսափիւնը, որ կատակներ է սարքում նոր բացվող ծաղիկների թերթերունքի հետ: Նա բոլորովին անգիտակից անցուդարձին, քնած էր, քնած էր անմեղ պարզութեամբ, մերթ ընդ մերթ թեթև ժպտալով իր երազական աշխարհում: Հրեշտակն անգամ, եթէ պատահաբար հանդիպէր նրան, պէտք է նախանձէր և չը պիտի ուզէր խանգարել այդ բնկած հրեշտակին...

Դուրսը շարունակվում էր աղմուկը, լռացընելով միւս սենեակների խուզարկութիւնները և պաշտօնական կողոպուտը, ոստիկան զինուորների մի խումբ, առաջնորդութեամբ Դէլի-Խուրշիդի մօտեցաւ սենեակի դրան. ոստիկաններից մին կոշտ կերպով իր ուսը տալով բաց արեց դուռը, որը իր ծխնիների վրայ ճռճռալով ուժգնապէս զարնվեցաւ պատին և ահագին աղմուկ բարձրացրեց: Կուսական մարմինը ցընցվեցաւ և առանց գիտենալու, թէ ովքեր են այդ վայրենի այցելուները, վեր թռաւ. Նա այդ ժամանակ նմանում էր խիտ մացառների տակ հանգիստ քնացող կաքաւին, որը սարսափելով որսորդի յանկարծական և անժամանակ այցելութիւնից, դուրս է պրծնում և փռփռալով թռչում, զարմացնելով մինչև իսկ վարպետ որսորդին: Վարդանոյշը (այդ էր երիտասարդուհու անունը) տեսնելով խոժոռ դէմքեր, սպառնական ձայներ, զէնքերի չխկչխկոց և թիւրք ոստիկանների յատուկ համազգեստ, բարձրացրեց մի սուր կանացի ճիչ և ինքն իրան նետելով մի մութ անկիւն, նուաղած ընկաւ... Դէլի-Խուրշիդն առաջին անգամ շփոթվելով յանկարծական ճչից, յիշեց ամայի սենեակների շրջիկ բերիներին, մի քանի վայրկեան արևելեան նախապաշարման մէջ տարուբերվեց և մինչև անգամ խիթաղփուրուլլահ (Աստուած հեռի արասցէ) կարդաց, բայց յետոյ նա կամաց-կամաց սիրտ առաւ: Ախտաբորբոք ոստիկանների աչքերը նշմարեցին մարած օրիորդին. խաւարի վաւակներն աւելի որոշ կերպով տեսնում են խաւարի մէջ... նրանք մտնում էին... անորգ կիրքերն արթնացած էին նրանց մէջ... մի քայլ միայն և ահա նրանք պէտք է բռնէին ծչացող ձայնը. բայց նրանց չը յաջողվեց այդ բանը... Մի հսկայ մարմին կայծակի արագութեամբ ճեղքեց անպատիւ ոստիկանների անկանոն շարքը, միևնոյն արագութեամբ նա դուրս պրծաւ, իր գրկում պինդ բռնած ունենալով մէկ նշարժ մարմին. դա Հաջի-Աղան էր: Ոստիկանները շուարած իրար երես էին նայում. Դէլի-Խուրշիդը հայհոյեց և մի ծանր ապտակ փակցրեց իր մօտը կեցող ոստիկաններից մէկի երեսին... Նա բարկութիւնից քիչ էր մնացել, որ տաքվի:

—Խընզըր գեավուր (խոզ անհաւատ), ոռնաց նա Հաջի-Աղայի ետևից, որն առանց ու-

1) Տես „Ապտակի“ առաջին տարի Nrs 7 — եւ 12 երկրորդ տարի Nrs 1 — 11.

ԹՈՒՐՔ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒՆ ԱՉՔԸ ԼՈ՞ՅՍ

Սուլթանը, որ շատ բարի է (չըսենք շատ վախկոտ), ուզեց որ Եւրոպայի մէջ գտնուող ասՃիկ ուսանողները յարաբերութիւն չունենան „ժէօն Թիւրք„երու և ուրիշ խռովարար տարրերու հետ, որպէս զի անոնց մաքուր միտքը չպղտորի վնասակար գաղափարներով։

Ի՞նչ պէտք էր ընել։

Հրամայեց որ բոլոր Թուրք ուսանողները Թուրքիա վերադառնան։ Անոնց ճանապարհի ծախքը իր անձնական գանձէն պիտի հոգացուի։

Շատ խելօք, շատ բանաւոր է այս տնօրէնութիւնը, մանաւանդ այն գերազանց պատճառաւ որ, այսօր, շնորհիւ վեհ. սուլթանին, Թիւրքիոյ հասալարանները, բազմարուեստեան վարժարանները և ամէն կարգի գիտական, զինուորական ևն. ևն. ևն. բարձր հաստատութիւնները եւրոպականներէն աւելի ծաղկած են (մինչև իսկ շատերուն ծաղիկներն ալ սկսած են թափթփիլ)։

Բայց միթէ այս կերպով վտանգը բոլորովին կանխեցանա՞յ. չէ՞ կրնար ըլլալ որ ուսանողները Թիւրքիոյ մէջ ալ վարակուին վնասակար գաղափարներէ։ Մենք խոնարհաբար սուլթանին կառաջարկենք աւելի արմատական միջոց մը, որով ամէն վտանգի առաջքը կառնուի մի անգամ ընդ միշտ։ Այդ միջոցն է — բոլոր Թուրք ուսանողներն ուղարկել ծովային վարժարանը — Մարմարա ծովին յատակը։

ՊԻԾԱԿ

ՆՄՈՅՇ ՕՍՄԱՆԵԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԷՆ

Պատժական օրինագրքի մէկ յօդուածը.

„Այն անձը որ մարդ մը կըսպաննէ, 15 տարուան բանտարկութեան կը դատապարտուի. 15 մարդ սպաննողը՝ մէկ տարուան բանտարկութեան. իսկ 15-է աւելի մարդ սպաննողները օրէնքի տրամադրութենէն դուրս կը գտնուին. այսպիսիները, վեհ. սուլթանի հրամանաց համաձայն՝ մասնաւոր պաշտօնի և պատուոյ կարժանանան։“

***

„Ապտակ“ի սատանայ լրաբերը կիմանայ թէ, վերոգրեալ յօդուածի համեմատ է որ, վերջերս բարձր պաշտօններ և պատուանշաններ ստացած են Զէքի փաշան, Նազըմ փաշան, Հայաստանի բարեռորոգիչ (կարդա՝ „արիւնռռոգիչ„) Շաքիր փաշան, Խուսրէվ փաշան և դեռ շատ ուրիշներ...

***

Միւս կողմէ, դարձեալ նոյն յօդուածի զօրութեամբ, Սուլթանի բարձր ներողամտութեան արժանացան կտրիճ Զէյթունցիները, որովհետև անոնցմէ իւրաքանչիւրը 15-է աւելի Թուրք էր սպաննած, և անոնց Հնչակեան պարագլուխներն ալ նոյն պատճառի հիման վրայ՝ Սուլթանի անձնական ծախսով առօք փառօք ուղևորուեցան Եւրոպա։

Z.

ԲԱՆՏԵՐՈՒ ՄԷՋ

Գաւառական իշխանութիւնները բանտարկուած Հայերէն շնորհակալութեան գիր կը պահանջեն սուլթանին մատուցուելու համար։

—Մեր բանտարկութեա՞նը համար շնորհակալ ըլլանք, կըսէ համարձակախօս Հայ մը։

—Ապերա՞խտ կեավուրներ, չէ՞ որ, շնորհիւ վեհ. սուլթանին, բանտարկուած մնալով կոտորածներէն ազատուեցաք։

***

ԹՈՒՐՔԵՐՈՒ ԶԱՑՐՈՑԹԸ ԶԷՅԹՈՒՆԻ ԴԷՄ

Զէյթունի դէպքէն ի վեր, Տաճիկները չուզելով զէյթին (ձիթապտուղ) բառը արտասանել, երբ նպարավաճառներէն ձիթապտուղ առնելու կերթան, „Շուն ալէթ տէն վէր“ (=ա անիծուածէն տուր) կըսեն։

***

Շատ Տաճիկներ ալ հրաժարելով զէյթին ուտելէ, Յունաստանի և Թրէյլայի ձիթապտուղի վաճառականները սնանկանալու վրայ են։

***

Սուլթանի մէկ իրատէին համաձայն՝ձիթապտուղը խստաբար վտարուած է կայսերական պալատէն. Սուլթանը նոյնպէս հրամայած է բոլոր Թուրքերուն որ, ուր որ զէյթինի կորիզ տեսնեն, փշրեն.այս կերպով փշրուած կըլլայ նաև հայերու աղատութեան կորիզը—Զէյթունը։

ԿԱՐԻՃ

„ՈՒՌՈՒՅԻԿ ԹԵՐԹ“

„Հայեր, մի խաբուիք. փողը մեզի տուէք. Զէյթունը ապստամբեցնողները Հնչակեանները չէին։ Աղատ Զէյթունի վրայ դրօշակը կը ծածանէր„։

Մեծ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆ „ԱՐՄԵՆԻԱ“Ի ՏՈԿՈՍԱՒՈՐ ԵՒ ՊԱՐԳԵՒԱՒՈՐ.
3000 ՖՐԱՆԿ ՀԱՐԻՒՐԻՆ-6 ՏՈԿՈՍՈՎ
90 ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ. ՎԱՃԱՌԵԼԻ ԵՎԱԿԱՆ և արտաքոյ խելքի շահու առիթ.
ՎՃԱՐՄՈՒՆՔՆԵՐՆ ՓՈԽԱՐԷՆ ԻԲՐԵՒ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿԸՆԵՐԿԱՑԱՑՈՒՆ «ԱՐՄԵՆԻԱ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԵՐԸ։
Bis dat qui cito dat.
ԿՐԿՆԱՊԱՏԻԿ ԿՈՒՏԱՅ ՈՎ ՇՈՒՏ ԿՈՒՏԱՅ
(ԱՍՏՈՒԱԾ ԱԼ ԻՐԵՆ ԽԵԼՔ ԿՈՒՏԱՅ)։
Փոխառումներին դիմաց՝ տոկոս։ — Ապրանքներու դիմաց՝ տոկոս։

ԱՅԴ

„ԱՊՏԱԿ“ի ներկայ ամսվայ թ. 12-դ համարով աւարտում է նրա հրատարակման երկրորդ տարեշրջանը։ Մենք այն բաժանողները, որոնք ցանկանում են նորոգել իրանց բաժանորդագրութիւնը՝ „ԱՊՏԱԿ“ի երրորդ տարեշրջանի համար, հրաւիրվում են կանխապէս անել այդ։

„ԱՊՏԱԿ“

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

„ԱՊՏԱԿ“ը հրատարակելով մենք ուզում ենք հայ յեղափոխական գործող մարմնին տալ մի նոր զէնք — երգիծաբանի ապտակը։ Այդ ապտակը թաթախված հայ քաջերի արիւնով՝ պէտք է հարուածէ այն ամէնոցին, թէ արտաքին եւ թէ ներքին թշնամիներին, որոնք թշնամի կամ հակառակորդ յայտնվելով յեղափոխութեան, թշնամի եւ հակառակ են յայտնվում նաեւ հայ ժողովրդային քաղմութեան, աշխատաւորի, գեղջուկի եւ բանուորի շահերին։

„ԱՊՏԱԿ“ը պէտք է ղեկավարվէ այն վսեմ գաղափարներով, որոնք ժամանակիս ամենաառաջադէմ գաղափարներն են հանդիսանում հանրամարդկային առաջադիմութեան մէջ, գաղափարներ, որոնք արդէն փայլուն կերպով յայտարարված են հայ յեղափոխական ասպարէզում եւ հայ յեղափոխականի գործերով ու արիւնով արծանագրված են հնչակեան դրօշակի վրայ։

„ԱՊՏԱԿ“ի լեզուն կը լինի միշտ անկեղծ, համարձակ, շիտակ, համոզված եւ խիստ։ Իր հարուածի տակ նա կը դնէ ամէն հասարակական հիմնարկութիւն եւ հասարակական անձեր, որ հայ յեղափոխական առողջ գաղափարին եւ ժողովրդի շահերին վնասակար են։

„ԱՊՏԱԿ“ի բոլոր համարներում միշտ կը զետեղվեն նկարներ քաղաքական պարունակութեամբ։

ԼՕՆԴՕՆ· „ՀՆՉԱԿԻ“ ՏՊԱՐԱՆ·

շադրութիւն դարձնելու, ծառայ Պետօի օգնութեամբ արդէն մտել էր խուզարկված սենեակներից մէկի մէջ, ուր Մարիամ հանըմը կէս ուշքի եկած դալկահար դէմքով պառկած էր անկողնում։ Սաստիկ տենդը տանջում էր վերջինս։ Նա այրվում էր և անընդհատ ջուր էր ուզում։ Իր խանգարված յիշողութեան մէջ պատկերանում էր քիչ ժամանակ առաջ տեղի ունեցած անցուդարձը։ Նրա ուղեղը և ջղային դրութիւնն այնքան լարվել էին, որ միշտ զառանցում էր. նա ապրում էր երազական աշխարհում. նրա երևակայութեան մէջ ներկայանում էին մտացածին, այլանդակ էակներ. նրանց խոժոռ ու կծկտված դէմքերը, լայն բացված մեծ բերանները, սուր ու երկար ակռաները սոսկում էին ազդում նրան։ Նա կարծես մինչև անգամ զգում էր նրանց դիւական շունչը, որ խփվում էր նրա այրվող դէմքին և աւելի ու աւելի գրգռում։ Ահա մի կարգ մարդակերպ հրէշներ, որոնք իրանց ձեռքերում բռնած մէկ աղաւնենման աղջիկ, ուզում են բզգտել, գըզգզել և պատառ-պատառ լափել. նա տեսնում է այդ անմեղ արարածին. նրա դէմքը շատ ծանօթ է իրան, նա, այդ հրէշների մօտալուտ զոհը, իր ձեռքերն երկարելով, աղաչում, պաղատում է. նրա շրթներից արտաբերվում է „մայրիկ“ խեղդվող ձայնը. իսկ սա ուզում է օգնել, բայց թոյլ չեն տալիս, խոշոր մագիլների նման սուր ձեռքեր ետ են մղում նրան, և նրա այրվող ճակատից քրտինքը հեղեղի նման հոսում է, նրա սրտի վրայ կապարի նման ճնշում է մայրական գորովը. համոզվելու համար սոսկալի իրականութեան շատ դժուարութեամբ բաց է անում իր նուաղկոտ աչքերը և շուրջ ածում։ Եւ յանկարծ նրա աչքին է ընկնում նոյն գեղեցիկ անձը, ոչ թէ հրէշների ձեռքում, այլ հօր գըրկում...

Վարդանոյշի երեսների վրայ գոյն չէր մնացել. նրա մազերն անխնամ կերպով թափվել էին այս ու այն կողմ, կարծես կեանքը խոյս էր տվել այդ էքնաղ մարմնից... Ծառայ Պետօն սառը ջուր էր սրսկում նրա դէմքին. նա ուշաթափված էր...:

—Մեռաւ... տարան... հասէք... խնայեցէք... լսվեցաւ մէկ անկիւնից։ Դա Մարիամ հանըմն էր. խեղճը զառանցում էր...

Տեսարանը եղերական էր։ Ծայրահեղ կատաղութիւնը, յուսահատական հառաչներ, կնային զառանցանք, մարած և դիակնացած մարմին, դալկահար դէմքեր միախառնվելով, կազմում էին մէկ իսկական ողբերգութիւն։ Հաջի-Աղան և Պետօն ապշած իրար էին դիտում. կարծես նրանք ուզում էին ստուգել, թէ իրաւ պատահել է այդպիսի մի դժբաղդ արկած, թէ ոչ՝ իրանց աչքերը խաբվում են։

—Երթանք, Հաջի-Աղա, երթանք, լսվեց յանկարծ դռան շէմքից մի կոշտ սպառնական ձայն։ Դա Նազըմի ձայնն էր։

Հաջի-Աղայի աներևոյթանալն այնքան յանկարծական էր եղել, որ միառժամանակ անկատելի էր մնացել։ Վարդանոյշի ողբալի ճիչը հասնելով հօր ականջին, այն աստիճան ազդել էր, որ ելեքտրական հոսանքի պէս ցնցել էր նրա ամբողջ ջիղերը. գնդակի նման դուրս էր նետվել, մէկ ոստիկանի զարնելով, միւսին գետին գլորելով, իսկ մի քանիներին կոխոտելով... Նազըմն իսկապէս կատաղել էր. որսը կորցրած շան պէս, նա մէկ այս կողմ էր վազում, մէկ այն կողմ։ Վերջապէս նա գտաւ նրան. իր սիրական որսն իր առջև էր։ Նա նայում էր նրա վրայ կիսավայրենի նայուածքով և արհամարհական ժպիտով, առանց ուշադրութիւն դարձնելու այն տխուր տեսարանին, որը պարզվում էր իր առջև։ Նրա մոլեռանդութիւնն ու ատելութիւնը դէպի քրիստոնեայ ժողովուրդն այն աստիճանի էր հասել, որ նրա մէջ, ինչպէս առհասարակ Թիւրք պաշտօնեաների մէջ, մեռցրել էր ամէն բարոյական զգացում։

Նազըմի ձայնը սարսափեցրեց Հաջի-Աղային, ուղղակի կարծես դժոխքից էր գալիս այդ ձայնը. բայց նա այժմ մի քիչ հանդարտ էր, նա կատարել էր իր ծնողական պարտաւորութիւնը. սակայն նրան տանջում էր մէկ ուրիշ միտք. — անորոշ ապագան, ուր ճակատագիրը մղում էր նրան. բայց կամայ ակամայ պէտք էր հնազանդվել. իր ինքնուրոյնութիւնը ձեռքը չէր։

—Երթանք, կրկնեց նա շատ անորոշ ձայնով. իբր խուլ արձագանք այն ողետալի ձայնին և մեքենայաբար շարժվեց դէպի դուռը... Նրա յուզմունքը, նրա այլայլութիւնն այն աստիճանի էր հասել, որ մինչև անգամ մոռացաւ իր վերջին հրաժեշտը տալ իր սիրելի ամուսնուն և միակ աղջկան Վարդանոյշին... Թիւրք բնութիւնը շարժում էր նրան ինչպէս մագնիսն իր ասեղը։ Նա գնում էր և նրա աչքերից արտասուքի խոշոր կաթիլները գլորվում էին։

—Նա գնա՞ց, կանչեց յուսահատաբար Պետօն, իր արտասուքից կարմրած աչքերը ձգելով երկու կանացի գունատ ու կիսամեռ դէմքերի վրայ. և այդ կոշտ մարդն իր առնական բարձր ձայնով սկսաւ լալ մանկան պէս։

ՎԻԹ.

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ։